ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900–1912 թթ.), *Երևան. «Գրական էտալոն», 2012, 752 էջ:*

Թումանյանագիտական մատենագրությունը մի ամբողջ գրադարան կարող է կազմել: Եվ սակայն ամբողջի մեջ իր բացառիկ արժեքով առանձնանում է Արամ Ինճիկյանի «Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը» աշխատությունը, որն ընդգրկում է բանաստեղծի կենսագործունեության առաջին երեք տասնամյակը (1869–1899): Նույն այս գործի շարունակությունն է Սուսաննա Հովհաննիսյանի «Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900–1912 թթ.)» նմանապես արժեքավոր ուսումնասիրությունը:

Որոնումների սահմանը գրեթե անընդգրկելի է. բազմաբնույթ մամուլի էջերից, արխիվային գզրոցներից, ժամանակակիցների հուշերից, բանահյուսական ասույթներից ու առավելապես գրողի նեբաշխարհի արձագանքներից հետազոտողը հյուսել է մի կյանքի պատմություն, որի մեջ բեկվում են ազգային գոյության բոլոր ուղեգծերը՝ սոցիալական, քաղաքական, մշակութային, գրական և այլն: Այսպես շարժման մեջ է հայոց ժամանակը՝ մարդիկ, դեպքեր, իրադարձություններ: Եվ այդ իրադարձությունների մշուշից հառնում է Թումանյանի կերպարը՝ միակը, տիեզերական անկրկնելին, անհունի անդրադարձում՝ ամենատես ու ողբերգական:

Հիրավի, ողբերգական անդրադարձ, քանզի կենսագրության ժամանակը համընկնում էր XIX դարի ռոմանտիկական Հայաստանի փլուզման և ազգային հուսախաբության հոգեբանական տագնապներին.

Ա՜խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև
Եվ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետ,
Ոսկի երազներ՝ միրաժի նման՝
Մեր անապատում չըքացան անհետ:

Եվ մենք խորտակված մեր կյանքի ծեգից,
Անհույս ու դալուկ, ճակատներըս ցած,
Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սըրտից և՛ երգ, և՛ աստված[1]*:*

Եվ այսպես, թվում է, թե կարդում ես կենսագրական վեպի մի հատորը, ուր գլխավոր հերոսի կյանքի դրվագները պատմում են, թե ինչ արժե անհատի դերը պատմության մեջ: Ու ազգային ընտրանին, ոգու փիլիսոփայական հայտնաբերումը իմաստ է տալիս վիպական հերոսի առաքելությանը: Այստեղ են Ղազարոս Աղայանը, Լևոն Շանթը, Ավետիք Իսահակյանը, Կոմիտասը, Խրիմյան Հայրիկը և անգուգական իշխանուհի Մարիամ Թումանյանը, որի կերպարում վեհանում է բնության արիստոկրատիզմը:

Աշխատության մեջ որոշակի ընդգծվում է ամեն հայ հանճարի ձգտումը դեպի ազգային ոգու նորոգությունը, դեպի իդեալի կատարելության եվրոպական ավանդույթները: Այս իմաստով, ինչպես ցույց է տալիս հետազոտողը, Թումանյանն ընդլայնում է հայոց կյանքի բովանդակությունը, հայ աշխարհայացքը զուգորդում քաղաքակիրթ մարդկության առաջընթացին: Անդրադարձ է կատարվում գրողի գեղարվեստական գործունեության հոգեբանական հանգամանքներին՝ մտահղացումից մինչև բնագրի ամբողջացումը:

---

[1] *Հովհ. Թումանյանի «Մեր նախորդներին» բանաստեղծությունն է՝ գրված 1902 թ. (տե՛ս Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 1, Երևան, 1988, էջ 205):*

1903 թ. լույս է տեսնում Հովհ. Թումանյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն: Դա բացառիկ տարեթիվ է հայ գրականության պատմության մեջ: Այստեղ ամբողջ ավարտվածությամբ ձևավորվում է թումանյանական հանճարը: Առանձին բաժին հատկացնելով ժողովածուին և նրա քննադատական արձագանքներին՝ Ս. Հովհաննիսյանն իրավացիորեն այն չափանիշ է դարձնում բացահայտելու ժամանակի գրական հայացքների տեսական անկատարությունը գեղարվեստական զարգացման հանդեպ: Բայց դա միայն գրական երևույթ չէր: Թումանյանին վիճակված էր կրելու իրականությունից վեր կանգնած հանճարի ճակատագիրը պատմության դատաստանի առաջ և կամքի ստեղծագործ մղումով գրական-հասարակական գործունեությամբ լինելու ուսուցիչ և առաջնորդ:

Այսպես, Ս. Հովհաննիսյանի սույն գիրքը ընթերցման հաճույք է պատճառում ոչ միայն բանասիրական լիակատար իրացումներով, այլև շարադրանքի էքսպրեսիվ, սահուն անցումներով, հանճարի ինքնաստեղծման առասպելի գրավչությամբ:

Ս. Հովհաննիսյանի «Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900–1912 թթ.)» աշխատությունը միանգամայն արժանի է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի:

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ